

Հասմիկ Հարությունյան

ԿՈՎԿԱՍԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆՈԼԵԶԿԱՐԱՎԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ՀԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ)

Բանալի բառեր՝ Կովկասյան մշակութային աշխարհի, բազմէթնիկ տարածք, էթնիկ տարածք, բնակության տարածք, Կովկասի ժողովուրդներ, բնիկներ, ինքնանուն, լեզու, կրոն:

ՀՅՈՒՄԻՍ-ԿՈՎԿԱՍՅԱՆ ԷԹՆՈԼԵԶԿԱԸՆՏԱՆԻՔ¹ (այսուհետև՝ ԷԼԸ)

Աբխազա-ադղղական էթնոլեզվախումբ (այսուհետև՝ ԷԼԽ)

Աբխազա-արազական էթնոլեզվաենթախումբ (այսուհետև՝ ԷԼԵԽ)

Աբխազներ² - Ինքնանունը՝ ափսուա (ստուգաբանվում է որպես հոգի ունեցող մարդիկ): Մեծագույն մասն ապրում է Աբխազիայում (դե յուրե՝ Վրաստան)³: Ապրում են նաև Ռուսաստանում, Թուրքիայում, Սիրիայում, Հորդանանում և այլն⁴: Լեզուն՝ աբխազերեն, հիմնական երկու բարբառներով՝ աբժուա (ընկած է գրական լեզվի հիմքում) և բզիբ: Աբխազների մի մասը ուղղափառ քրիստոնյա է (քրիստոնեությունը՝ որպես պաշտոնական կրոն, ընդունել են դեռևս 523թ.), մի մասը՝ սունի մահմեդական (լինելով թուրքական տիրապետության տակ՝ 15-րդ դարում ընդունեցին մահմեդականություն): Ժողովրդի մեջ առավել կենսունակ են բնապաշտական հավատալիքները⁵:

¹ Մի ժամանակ աշխարհի բնակչության էթնոլեզվական համակարգում կար Կովկասյան կամ Իբերակովկասյան ԷԼԸ՝ 4 ԷԼԽ-ով՝ Հյուսիս-արևմտակովկասյան Աբխազա-ադղղական, Հյուսիս-կենտրոնակովկասյան՝ Վայնախյան կամ Նախյան, Հյուսիս-արևելակովկասյան՝ Ղաղստանյան և Քարթվեյան Հարավ-կովկասյան (Պիրենեյան թերակղզու հնագույն բնակիչների՝ իբերների հետնորդներ համարվող բասկերի և Կովկասի ժողովուրդների միջև ծագումնաբանական ազգակցության մասին ենթադրությունը դեռևս գիտական համընդհանուր ճանաչման չի արժանացել): Ն. Մառն այդ ընտանիքն անվանեց Հաբեթական առասպելական Նոյի Հաբեթ որդու անունով, նկատի ունենալով, որ կա Սեմաքամական ԷԼԸ, և Հաբեթական ժողովուրդներն առավել ազգակից են հատկապես Սեմաքամական ժողովուրդներին (այսօր միտում կա ԷԼԸ-ներն անվանել աշխարհագրական, ոչ թե առասպելական անուններով, ըստ այդմ՝ Սեմաքամական ԷԼԸ-ը վերանվանվել է Աֆրասիական): Մինչև 1980-ական թ. քառամաս մոդելը կասկած չէր հարուցում, սակայն նորագույն հետազոտությունները հիմք տվեցին ենթադրելու, որ վրացիները (քարթվեյան լեզուները) գոնե հեռավոր ազգակցություն չունեն Կովկասյան մյուս ժողովուրդների (լեզուների) հետ, և առանձնացվեցին 2 ԷԼԸ-ներ՝ Հյուսիս-կովկասյան և Քարթվեյան կամ Հարավ-կովկասյան: Ավելին, գիտական հետազոտությունները ցույց են տվել, որ վրացիները (քարթվեյան լեզուները) առավել ազգակից են, օրինակ, Հնդեվրոպական, Աֆրասիական, քան Հյուսիս-կովկասյան ժողովուրդներին (լեզուներին), հետևաբար մի քանի ազգակից ԷԼԸ-ների հետ միասին ընդգրկվում են միևնույն մակրոէթնոլեզվաընտանիքի մեջ: Չնայած անվան վերաբերյալ տարակարծություններին՝ այսօր գիտական շրջանակներում առավել ընդունված է *Հյուսիս-Կովկասյան ԷԼԸ* անունը:

² Աշխարհին հայտնի են վրացիների կողմից տրված անունով, որի հիմքում ընկած է աբխազների ձևավորմանը մասնակցած երկու հիմնական էթնիկ տարրերից մեկի՝ *աբազգների* անունը: Ձևավորմանը մասնակցած մյուս հիմնական բաղադրիչը՝ *ախսիլները*, *աբեշլա* տարբերակով հիշատակվում են դեռևս մ.թ.ա. 11-րդ դ., ասորեստանյան թագավոր Թիգլաթպալասարի արձանագրության մեջ: Աշխարհացույցում՝ *Ավշիլը*, *Ախխազը*:

³ Աբխազները պատմական Կովկասի բնակչության հետնորդներից են: 8-րդ դարում ձևավորվել էր Աբխազական թագավորություն Անակոպիա (այժմ՝ Նովի Աֆոն) մայրաքաղաքով, որն ընդգրկում էր նաև Արևմտյան Վրաստանի տարածքները: 10-րդ դարում Վրաց-Աբխազական միացյալ հզոր թագավորություն էր Քութայիս մայրաքաղաքով (արևմտյան վրացիների հետ աբխազների մարդաբանական և մշակութային նմանությունները ոչ թե ծագումնաբանական ազգակցությամբ, այլ միջէթնիկ ամուսնություններով և փոխառություններով են պայմանավորված): Աբխազիան որպես իշխանություն, Չաչբա (Շերվաշիձե) հայտնի իշխանական տան զխավորությամբ գոյատևեց մինչև 1812 թ.: Մինչև 1931 թ. Աբխազիան առանձին հանրապետություն էր ԽՍՀՄ կազմում: 1992-1993 թթ. վրաց-աբխազական պատերազմն ավարտվեց Աբխազիայի փաստացի անկախության ձեռքբերումով:

⁴ Կովկասյան պատերազմից (1817-1864թթ.) հետո այն կովկասցիները (նաև աբխազները), որոնք չընդունեցին ռուսական տիրապետությունը, գաղթեցին Օսմանյան կայսրություն, Մերձավոր Արևելքի երկրներ, որտեղ հայտնի են հավաքական *չերքեզ* կամ *կովկասցի* անուններով: Աբխազների և մյուս ժողովուրդների համոզմամբ իրենց էթնոսի մեծագույն հատվածն ապրում է հենց այդ երկրներում, ոչ թե իրենց հանրապետությունում, Կովկասում: Քանի որ պաշտոնական տվյալներ չկան այնտեղ ապրող կովկասցիների թվաքանակի մասին էթնիկ պատկանելության տեսանկյունից, Կովկասի ժողովուրդների մեծագույն մասի բնակության տարածքը կներկայացնենք ըստ պաշտոնական տվյալների: Չկրկնվելու համար այլևս չենք նշի Թուրքիան և Մերձավոր Արևելքի մյուս երկրները, որտեղ ապրում են մոհաջիրների (muhacir-արաբաթուրքական լեզուներում՝ գաղթական) հետնորդները:

⁵ Բավական է նշել, որ նախազախի երդման արարողության ժամանակ սկզբում ձայնը տրվում է քուրմին, ապա՝ քրիստոնյա, վերջում՝ մահմեդական առաջնորդին:

Աբազներ – Ինքնանունը՝ արագա: Մեծագույն մասն ապրում է Ռուսաստանում¹ Ղարաչայա-Չերքեզական Հանրապետությունում², Չերքեսկ քաղաքից հարավ-արևելք, մոտավորապես 1,5 տասնյակ գյուղական բնակավայրերում³: Լեզուն՝ արազերեն, որն, ըստ մասնագետների, հնչյունական համակարգով Կովկասի ամենաբարդ լեզուներից մեկն է: Ունի երկու բարբառ՝ տապանտա՝ հովտեցիների (որն ընկած է գրական լեզվի հիմքում) և աշխարա՝ լեռնեցիների⁴: Սունի մահմեդական են: Մահմեդականությունը ընդունել են նոդայներից 17-18-րդ դարերում:

Աղըղական ԷԼԵԿ

Աղըղներ⁵ - Ինքնանունը՝ աղըղե: Մեծագույն մասն ապրում է Աղըղեա Հանրապետությունում: Լեզուն՝ աղըղերեն: Սունի մահմեդական են⁶:

Կաբարդիներ⁷ - Ինքնանունը՝ աղըղե, նաև՝ կեբերդեյ, որն սկզբում միայն քաղաքական, աշխարհագրական իմաստ ուներ՝ Կաբերդի իշխանների տիրույթ: Մեծագույն մասն ապրում է Կաբարդինա-Բալկարական Հանրապետության հյուսիսային մասում: Լեզուն՝ կաբարդիներեն կամ կաբարդինաչերքեզերեն: Գրական լեզվի հիմքում ընկած է Մեծ Կաբարդայում՝ Բակսան գետի հովտում ձևավորված բեյլե-նեկաբակսանյան բարբառի բակսանյան խոսվածքը: Սունի մահմեդական են⁸:

¹ Քանի որ ողջ Հյուսիսային Կովկասը Ռուսաստանի կազմում է, այսուհետև, որպես էթնոսի մեծագույն մասի բնակչության վայր, կնշենք միայն հանրապետության անունը:

² Նախընտրում ենք այս տարբերակը, ոչ թե՛ Կարաչայա-Չերքեզական Հանրապետություն:

³ Նախնիներն ապրել են Սև ծովի ափին, Սոչի գետի ավազանում: Արդեն ձևավորված էթնոսը, ըստ մասնագետների, ներկայիս բնակչության տարածք տեղափոխվել է 14-րդ դարում: Մարտական ոգի ունեցող, պատվախնդիր ժողովուրդ է: Ծագմամբ ազգակից են արխազներին, սակայն մշակույթով նման են աղըղական էթնոսներին: Հնագույն զբաղմունքներից էր վայրի կենդանիների որսը: Ի դեպ, արդյունահանության հիմնական տարրը՝ մորթին, իրացնում էին առավելապես հայ առևտրականները:

⁴ Ըստ Ս. Ա. Հարությունովի՝ կարելի է դիտել արխազա-արազական գրական մեկ լեզու:

⁵ Այս էթնանունը գործածվում է նաև մակրոէթնիկ հանրության իմաստով. *աղըղներ* անվանում են նաև երեք էթնոսներին՝ աղըղներին, չերքեզներին, կաբարդիներին միասին, որոնք անցյալում հայտնի էին *չերքեզներ* անունով: Աղըղների նախնիները համարվում են մետոսական (Ազովի ծովի հին անունով) և ոչ մետոսական տասնյակ էթնիկ տարրեր՝ սինդեր, փեսներ, ֆատեներ, դոսխեր, թորետներ, կերկետներ (*չերքեզներ* անունը ստուգաբանվում է այս էթնանունով), գիխեր, ախեյներ, որ ապրում էին Սև և Ազովի ծովերի առափնյա տարածքներում, մ.թ.ա 1-ին հազ. վերջ-մ.թ. 1-ին հազ. կեսեր: Թեև երեք աղըղները հաճախ ընկալվում են որպես լեռնեցիներ, սակայն նրանք զբաղեցնում են նախալեռնային և հարթավայրային տարածքներ: Նրանք այնքան ազգակից են, որ նրանց մշակույթները, հատկապես կաբարդիների և չերքեզների (որոնք խոսում են նույն մայրենի լեզվով), հաճախ միասին են բնութագրվում: Աղըղները և կաբարդինաչերքեզերենը ձևավորվել են միասնական աղըղերենի էականորեն տարբերվող արևելյան և արևմտյան բարբառների հիմքի վրա: Որոշ գիտնականներ ընդունում են 3 էթնոսների գոյությունը, սակայն գտնում են, որ նրանք խոսում են մեկ լեզվով: Երեքն էլ ունեն նույն ինքնալեզվանունը՝ *աղըղերզգե*: Այսօր էլ կենսունակ են որոշ ազգագրական խմբեր, որոնց նախնիներն անվանում էին դեմոկրատական և արիստոկրատական ցեղեր՝ արածեխներ, բեյլենեներ, բժեղուղներ, եգերուխաններ, մամխեզներ, մախոշներ, նատուխայներ, տեմիրգոններ (գրական աղըղերենի հիմքում ընկած է տեմիրգոնների բարբառը), խատուկաններ, շափսուղներ և այլն: Սև ծովի առափնյա շրջանում, Կրասնոդարի երկրամասում, Սոչի քաղաքի արվարձանում ապրող շափսուղները (շափսղները), որոնք առանձնանում են իրենց յուրահատուկ բարբառով, երբեմն հիշատակվում են որպես առանձին էթնոս:

⁶ Մահմեդականությունն աղըղական էթնիկ տարրերի մեջ տարածվել է 14-16-րդ դարերից, որն արմատավորվեց հետագա դարերում Դրիմի խանության (որի տիրապետության տակ էր Հյուսիս-արևմտյան Կովկասի մի մասը) և թուրքական ազդեցությամբ, հատկապես Կովկասյան պատերազմի ժամանակ՝ ի հակակշիռ ռուսական զավթողական քաղաքականության: Ավելի վաղ՝ 6-7-րդ դարերում, ապա 10-12-րդ դարերում տարածվել էր քրիստոնեությունը ոչ միայն Կրաստանի, Բյուզանդիայի, այլև Թաման թերակղզում ձևավորված Տնուտարականի ռուսական իշխանության ազդեցությամբ: Առհասարակ Հյուսիսային Կովկասի էթնիկ տարրերի (այդ թվում նաև արազների, ինգուշների, ղարաչայների և այսօրվա մահմեդական մյուս ժողովուրդների նախնիների) մեջ դեռ վաղուց ներթափանցել էին քրիստոնեական հավատալիքները, որոնց հետքերը պահպանվել են մինչ օրս: Հատկանշական է, որ ուրբաթ օրը *մերեմ* է կոչվում չերքեզների մեջ, ղարաչայները խոզի ոսկորները և կաշին նույնիսկ 20-րդ դարի կեսերին պահում էին հաջողություն բերելու համար և այլն: Նախաքրիստոնեական հավատալիքները առավել կենսունակ էին (և են) այնտեղ, որտեղ ֆեոդալական շերտը թույլ էր:

⁷ Կաբարդիների ձևավորմանը մասնակցել են պլաններ, որովհետև այն տարածքում, ուր մոտավորապես 14-րդ դարում բնակություն հաստատեց աղըղներից հեռացած անասնապահ (ծիաբույծ) հատվածը, պլաններն էին ապրել: Կաբարդիների դերը Կովկասի քաղաքական կյանքում թուլացավ մոհաջիրության պատճառով, իսկ մինչ այդ նրանք նույնիսկ ի վիճակի էին կանգնեցնելու կալմիկների առաջխաղացումը Կովկաս:

⁸ Մոզդուկի (Հյուսիսային Օսեթիա-Ալանիա) կաբարդիներն ուղղափառ քրիստոնյաներ են: Դրանք տերերից փախած այն ճորտերի հետնորդներն են, որոնք ազատություն ստացան ուղղափառություն ընդունելու դիմաց:

Չերքեզներ¹ - Ինքնանունը՝ ադրղե: Մեծագույն մասն ապրում է Ղարաչայա-Չերքեզական Հանրապետության հյուսիսային մասում: Լեզուն՝ կաբարդինա-չերքեզերեն: Սունի մահմեդական են:

Ուբրխներ² - Ինքնանունը՝ փեխ, փյոխ: Ուբրխների հայրենիքը Սոչի գետի ավազանն է, սակայն մեծագույն մասն այսօր ապրում է ներկայիս Թուրքիայի արևելյան հատվածում: Այն փոքրաթիվ ուբրխները, որոնք Կովկասյան պատերազմից հետո չգաղթեցին, ժամանակի ընթացքում ծուլվեցին արխազներին և շափսուղներին: Թուրքիայում ուբրխները լեզվական առումով արդեն ծուլվել են (մայրենիին տիրապետող վերջին ուբրխները մահացել են 1990-ական թվ.) և, ցավոք, ուբրխներենը կարելի է դասել մեռած լեզուների շարքին: Սունի մահմեդական են:

Վայնախա-դաղստանյան ԷԼԽ³

Վայնախյան կամ Նախյան ԷԼԽ

Չեչեններ - Ինքնանունը՝ նոխճո⁴ (առավել հաճախ ստուգաբանվում է *մարդ*): Մեծագույն մասն ապրում է Չեչենական Հանրապետությունում: 1944-57թթ. ստալինյան աքսորից վերադառնալուց հետո բնակություն հաստատեցին առավելապես հարթավայրային շրջաններում⁵: Լեզուն՝ չեչեներեն, որի հիմքում ընկած է հարթավայրային բարբառը: Սունի մահմեդական են: Մահմեդականություն ընդունել են Դաղստանից 16-րդ դարում (քրիստոնեությունը տարածվել էր Վրաստանից, 12-13-րդ դարերում), ամրապնդվել է Կովկասյան պատերազմի ժամանակ⁶:

Ինգուչներ⁷ - Ինքնանունը՝ ղըղայ: Մեծագույն մասն ապրում է Ինգուչերիայի Հանրապետությունում: Լեզուն՝ ինգուչերեն: Ինգուչերենը և չեչեներենը փոխըմբռնելի լեզուներ են, քանի որ բառապաշարի շուրջ 40 տոկոսը կազմում են նույն բառարմատները: Սունի մահմեդական են, մահմեդականություն ընդունել են բավականին ուշ՝ 19-րդ դարում, չեչեններից, և այսօր կենսունակ են նաև ավանդական հավատալիքները:

Քացիներ կամ **ցովաթուչեր** (հյուսիսային թուչեր)- Ինքնանունը՝ բացբի: Մեծագույն մասն ապրում է Վրաստանում, Ջեմո-Ալվանի գյուղում (Կախեթիա): Այսօր առավել հաճախ դիտվում են ոչ թե վայնախյան էթնիկ զանգվածից հեռացած հատվածի հիմքի վրա առաջացած առանձին էթնոս, այլ ԵԷՎ վրացիների մեջ, քանի որ վրացական էթնիկ ինքնագիտակցություն ունեն: Մայրենի լեզուն՝ բացբիերենը, որը միայն ընտանեկան հաղորդակցության լեզու է, ծագմամբ ազգակից է վայնախյան լեզուներին:

¹ Կաբարդիների այն հատվածը (հիմնականում՝ բեյլենենները), որ 19-րդ դարում տեղափոխվեց Կուբան գետի վերին հոսանքի ավազան, հետագայում ձևավորվեց որպես առանձին էթնոս, նոր էթնիկ ինքնագիտակցությամբ՝ չերքեզներ:

² Ս. Ա. Հարությունովը միջանկյալ է դիտում ուբրխներին և ուբրխներենը Աբխազա-աբազական և Ադրղական ԷԼԽ-երի էթնոսների և լեզուների միջև:

³ Ս. Ա. Հարությունովն այս ԷԼԽ-ում ներառում է նաև վաղուց մեռած խուրիտա-ուրարտական ժողովուրդներին:

⁴ Աշխարհացույցում *Նախճամատեանք*, հայտնի են կաբարդիներից ռուսներին փոխանցված էքզոէթնանունով (արտանունով), որը վերաբերում էր Մեծ Չեչեն գյուղի և հարակից տարածքների բնակչությանը: Ինգուչների հետ միասին ունեն ևս մեկ ինքնանուն *վայնախ* (մեր մարդիկ), թեև դա գիտնականների կողմից շրջանառության մեջ դրված եզրույթ է: Ստրաբոնի հիշատակած *գարգարներին* ոմանք կապում են չեչենների հետ (չեչեններեն *գերգարա* մերձավոր, հարազատ): Որոշ մասնագետներ այդ կարծիքին չեն: Առավել հայտնի էին տարածքային խմբերի անուններով (չեբերլոյ, շատոյ, ակկինցի և այլն), որոնք կարող էին համընկնել շրջակա գետերի, լեռների անունների հետ, օրինակ՝ միչիկցի (Միչիկ գետի անունով): Չեչենների մեջ մինչ օրս կենսունակ է տոհմական՝ *թելիային* (տոհմ, *ցեղ, ամբոխ* բառից), *թուխումային* (*սերմ* բառից) համերաշխության գաղափարը:

⁵ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Կովկասի որոշ ժողովուրդներ (չեչեններ, ինգուչներ, Ղարաչայներ, բալկարներ և այլն) ֆաշիստների հետ համագործակցության անհիմն մեղադրանքով աքսորվեցին Ղազախստան և Կենտրոնական Ասիա, դրանով է պայմանավորված այդ ժողովուրդների որոշակի թվաքանակի առկայությունը նշված տարածքի երկրներում, ինչի մասին հարկ չենք համարել նշել բնակչության տարածքը ներկայացնելիս:

⁶ Չեչենների էթնիկ տարածքը Շամիլի իմամաթի կրոնական պետության (1840-1859) կազմում էր:

⁷ Հայտնի են կաբարդիներից ռուսներին փոխանցված էքզոէթնանունով: Այդպես անվանել են 17-րդ դարում նրանց հիմնադրած հարթավայրային 1-ին բնակավայրերից մեկի՝ Անգուչտ/Օնգուչտ (այսօր՝ Հյուսիսային Օսեթիա-Ալանիա Հանրապետության Պրիգորդնի շրջանի Տարսկոյե) գյուղի (որոշ ժամանակահատված կազակական ստանիցա) և շրջակայքի բնակիչներին: Աշխարհացույցում հիշատակվում են *թուստը*, որոնց կապում են ինգուչների հետ: Առհասարակ կա տեսակետ, որ ինգուչների հիմքը կազմել են վայնախյան էթնիկ տարրերից հատկապես օսերին սահմանակից արևմտյան հատվածները՝ *ղըղայները*, *քիստերը* և այլն: Վրաստանում, Պանկիսի կիրճում ապրող *քիստերը* երբեմն դիտվում են վայնախյան ծագմամբ առանձին ժողովուրդ, երբեմն ԵԷՎ (ենթաէթնիկ հանրություն) չեչենների մեջ: Խոսում են չեչեներենի բարբառով վրացերենի ուժեղ ազդեցությամբ: Սունի մահմեդական են:

Գրական լեզուն վրացերենն է: Մեծապես ենթարկվել են վրաց լեզվամշակութային ազդեցությանը: Ուղղափառ քրիստոնյա են:

Ղաղստանյան ԷԼԵՍ

Ավարա-անդո-ցեզական էթնոլեզվաճյուղ (այսուհետև՝ ԷԼՃ)

Ավարներ- Ինքնանունը՝ մա'արուլ (երբեմն ստուգաբանվում է որպես լեռնեցի)¹:

Ավարների էթնիկ տարածքը Արևմտյան Ղաղստանի լեռնային հատվածն է: Հյուսիսարևմտյան Ադրբեջանի ավարները այդտեղ ապրող ցախուրների (ծախուրների) հետ միասին մի ժամանակ հայտնի էին Ջարո-Բելրկանիի (Ջակաթալայի) լեզգիներ² անունով: Լեզուն՝ ավարերեն՝ հյուսիսային և հարավային բարբառներով: Գրական լեզվի հիմքում ընկած է դեռևս միջնադարում հյուսիսային բարբառի հիման վրա ձևավորված քոյնեն, բոլմածը, «բանակի լեզուն»³: Սունի մահմեդական են⁴:

Անդո-ցեզական էթնոլեզվաենթաճյուղ (այսուհետև՝ ԷԼԵՃ)⁵

Անդիական էթնոլեզվաենթաենթաճյուղ (այսուհետև՝ ԷԼԵՅԸ)

¹Ավար հեղինակները *լեռնեցի* բառի հետ չեն կապում, համարում են դեռևս անբացատրելի էթնանուն: 1950-ական թվականներին տարիքով մարդիկ նույնիսկ չգիտեին, որ իրենց ավար են ասում, իրենք իրենց անվանում էին տարածքային անուններով, առավել հաճախ՝ *խունգալացի* (12-19-րդ դարերում, մինչև Ռուսաստանին այս տարածքի միանալը, կար Ավարական ֆեոդալական պետական կազմավորում, հետագայում խանություն՝ խունգալ կենտրոնով: Աշխարհացույցում հիշատակվում են *խունգ*: Էթնիկ ինքնագիտակցություն չկար, կար հայրենասերական կամ տարածքային ինքնագիտակցություն: Որոշ մասնագետներ ավարներին համարում են Պողոմեոսի հիշատակած սավարների (սավիրների) հետնորդներ: Ավար հեղինակները այլ կարծիքի են. *ավար* էթնանունը հիմնականում ստուգաբանում են 9-10-րդ դարերի արաբական աղբյուրներում հիշատակված Սերիթ թագավորության (որը ավարների էթնիկ տարածքում էր) 5-րդ դարի թագավոր Ավարի անունով:

² Հնում բոլոր դաղստանցիները հայտնի էին հավաքական *լեզգիներ* կամ *լեռնեցիներ* անունով, *լեռնեցիներ* անունը էթնիկ երանգ ուներ, թեև երբեմն բոլոր կովկասցիներին նկատի ունեին՝ *լեռնեցիներ* ասելով:

³ Երբեմն նշվում է, որ գրական լեզվի հիմքում ընկած է հորլմածը՝ «հյուրի լեզուն», որը դարերի ընթացքում ձևավորվել էր առևտրափոխանակային կենտրոններում, հյուրերի հետ շփումների ընթացքում: Մինչև 1920-ական թվականները Ղաղստանյան ԷԼԵՍ-ի ժողովուրդներից միայն ավարներն ու լաքերը (որոշ մասնագետների կարծիքով նաև լեզգիները, կարատինները) ունեին գրավոր լեզվի սաղմեր արաբական գրի հիման վրա՝ աջամ, լրացուցիչ նշաններով կովկասյան յուրահատուկ հնչյուններն արտաբերելու համար: 1920-ական թվականներին լատինական գրի հիման վրա ձևավորվեցին ավարների, լեզգիների, լաքերի, դարգինների, թաբասարանների գրավոր լեզուները, 1930-ական թվականներից մինչ օրս այս ժողովուրդների գրավոր լեզուները կիրառվեցին հիման վրա են հավելյալ նշաններով: Կա կարծիք, որ այս տարածքում չծնված և չմեծացած մարդը երբեք չի կարողանում ճիշտ արտաբերել տեղի լեզուներին հատուկ հնչյունները:

⁴ Ավարների մեջ մահմեդականությունը հաստատվեց 14-15-րդ դարերում, սակայն վերջնականապես խորապես ամրապնդվեց Կովկասյան պատերազմի ժամանակ, քանի որ նրանց տարածքը Շամիլի իմամաթի կազմում էր: Առևտրական մահմեդականությունը Ղաղստան (այդ թվում նաև ավարների և նրանց ազգակից ժողովուրդների մեջ) ներթափանցել է դեռևս 8-րդ դարում կապված արաբական արշավանքների հետ, առավել տարածվել է մոնղոլական արշավանքների ժամանակ, իսկ ավելի վաղ՝ 5-6-րդ դարերում, այստեղ ներթափանցել էր քրիստոնեությունը:

⁵ Անդո-ցեզական 13 փոքրաբանակ ժողովուրդների էթնիկ տարածքը Արևմտյան Ղաղստանի լեռնային շրջաններն են, ապրում են ավարների հետ շերտընդմեջ (անդիական 8 ժողովուրդները՝ հյուսիս-արևմտյան հատվածում, ցեզական 5 ժողովուրդները՝ Կրաստանի հետ սահմանակից Արևմտյան Ղաղստանում, նպատակահարմար չենք գտել թվարկել բոլոր գյուղերի անունները, որտեղ ապրում է տվյալ ժողովուրդը): Կա կարծիք, որ նրանց կարելի է դիտել որպես ավարների ԵԷ-ներ: Ոչ միայն լեզվով են ազգակից, այլև մշակույթի հիմնական տարրերով նման են ավարներին: Մարդահամարների ժամանակ հաճախ նրանց չեն առանձնացնում ավարներից: Անդո-ցեզական ժողովուրդները հայտնի են ավարների կողմից տրված էքզոէթնանուններով, որոնք համընկնում են տվյալ ժողովուրդով բնակեցված ամենամեծ գյուղի անվան հետ, որոնց պաշտոնական անունները ևս ավարերեն են: Ցեզական ժողովուրդներն 1-ին անգամ հիշատակվում են 1-2-րդ դարերի անտիկ աղբյուրներում (Պլինիոս Ավագ (Պլինիոս Ավագը հիշատակում է նաև անդիական ժողովուրդներին), Պողոմեոս) *դիդոյներ*, *դիդուրներ* անունով: 11-15-րդ դարերում Արևմտյան Ղաղստանի լեռնեցի ժողովուրդներից շատերը միավորված էին *Ղիդո* անունով գյուղական համայնքների ռազմաքաղաքական միության մեջ: Անդիական ժողովուրդներից բոլորիներն ու բազուլները (բաղուլները) ևս այդ միության կազմում էին: Սունի մահմեդականներ են: Մահմեդականությունը սկսեց ակտիվորեն տարածվել հատկապես ավարական խաների նվաճողական քաղաքականության հետ կապված: Լինելով Շամիլի իմամաթի կազմում ավարների հետ միասին ակտիվորեն մասնակցել են Կովկասյան պատերազմին ընդդեմ ռուսներին: Երբ 1944 թ. չեչեններին քարոզեցին, անդո-ցեզական ժողովուրդներին ստիպողաբար բնակեցրին նրանց զբաղեցրած տարածքներում: 1957 թ.-ից հետո վերադարձան իրենց էթնիկ տարածքները, մի մասն այսօր էլ ապրում է Ղաղստանի հարթավայրային տարածքներում: Ցեզական լեզուները առատ փոխառություններ ունեն ավարերենից, նաև (ավարերենի միջոցով) արաբերենից, պարսկերենից, թյուրքական լեզուներից: Բավական փոխառություններ ունեն վրացերենից (բացի խվարչերենը): Ցեզական լեզվից միջև տարբերություններն առավել նշանակալի են, քան անդիական լեզուների միջև: Ցեզական լեզուները ավարերենից ավելի շատ են տարբերվում, քան անդիական լեզուները: Կիրառվում են միայն խոսակցական մակարդակում (որոշ ժողովուրդների մեջ ձևավորվում են գրավոր լեզուներ): Օգտվում են գրական ավարերենից, ռուսերենից, վրացերենից, ադրբեջաներենից: Նպատակահարմար ենք գտնում անդո-ցեզական ժողովուրդներին ներկայացնել այբբենական կարգով, ոչ թե ըստ առավել ազգակցության: Այբբենական կարգը խախտում ենք նպատակահարմար գտնելով առաջինը ներկայացնել այն ժողովուրդին, որի անունով կոչվում է ԷԼԵՅԸ-ը:

Անդիներ¹- Ինքնանունը՝ կխվաննալ, հվանալ, անդալ: Լեզուն՝ անդիերեն՝ հյուսիսային և հարավային բարբառներով:

Ախվախներ - Ինքնանունը՝ աշվադո: Ապրում են նաև Ադրբեջանում, Ջակաթալայի շրջանում, ուր տեղափոխվել են 18-րդ դարի 1-ին կեսին: Լեզուն՝ ախվախերեն՝ հյուսիսային և հարավային բարբառներով: Երկու բարբառների տարբերությունն այնքան զգալի է, որ հաղորդակցվում են ավարերենով:

Քազուլայներ (բադուլայներ, բադվալայներ)² - Ինքնանունը՝ գանսոյալո (ստուգաբանվում է որպես հում միս ուտող, աղքատ մարդիկ, հսկաներ): Որոշ մասնագետների ուսումնասիրությունների համաձայն՝ ընդհանուր ինքնանուն չունեն, իրենք իրենց անվանում են հարազատ գյուղի անունով: Լեզուն՝ բազուլալերեն՝ 3 հիմնական խոսվածքներով:

Բոթլիխներ- Ինքնանունը՝ բույխադի: Լեզուն՝ բոթլիխերեն՝ 2 խոսվածքների հնչյունական աննշան տարբերություններով:

Գոդոբերիներ (դոդոբերիներ)³ - Ինքնանունը՝ ռիբդիդի: Լեզուն՝ գոդոբերիերեն: Շատ մոտ է հարևան բոթլիխերենին, ընդհանուր գծեր ունի նաև մյուս հարևան չամալալերենին: Գոդոբերիների գյուղերի խոսվածքները իրարից փոքր-ինչ տարբերվում են:

Թինդայներ (տինդայներ) – Թինդի (Իդարի) գյուղի բնակիչների ինքնանունը՝ իդարներ, իդերներ: Մյուսներն իրենք իրենց անվանում են գյուղի անունով: Ապրում են նաև Ադրբեջանում: Լեզուն՝ թինդալերեն: Գյուղերի խոսվածքների միջև տարբերություններն աննշան են:

Կարատիններ - Ինքնանունը՝ կիրդի: Լեզուն՝ կարատիներեն: Խիստ առանձնանում է Տոկիտա գյուղի բարբառը ոչ միայն արտասանությամբ, այլ նաև հոլովածներով: Կովկասում հանրահայտ էր կարատինների արտադրած մահուղը:

Չամալայներ (չամալադներ) - Ինքնանունը՝ չամա-իգա (որոշ ստուգաբանությամբ՝ *ծիրանի չիր*): Ապրում են նաև Չեչենիայում: Լեզուն՝ չամալալերեն՝ խիստ տարբերվող բարբառներով, խոսվածքներով: Առավել մոտ է բազուլալերենին:

Ցեզական ԷԼԵԾԸ

Դիդոյներ (դիդոյցիներ)⁴ - Ինքնանունը՝ դիդո կամ ցեզ (ստուգաբանվում է *արծիվ* բառով): Հայտնի են նաև *ծունտիններ (ծունտալ)* էթնոէթնանունով: Ապրում են նաև Վրաստանում: Լեզուն՝ ցեզերեն: Խոսվածքների միջև տարբերություններն աննշան են:

Բեժտաղիներ - Ինքնանունը՝ բեժտա: Ավարներն անվանում են *խվանալ* (ծիավաճառներ): 16-17-րդ դարերից բնակություն են հաստատել նաև Վրաստանում: Վրացիները Բեժտա գյուղն անվանում են Կապուչա, բեժտաղիներին՝ կապուչաղիներ (10-րդ դարի արաբական աղբյուրներում հիշատակվում է *Կաֆուչի* երկիրը): Լեզուն՝ բեժտերեն կամ կապուչերեն:

Գինուխներ (հինուխներ) - Ինքնանունը՝ հինուք: Լեզուն՝ գինուխերենը, որոշ գիտնականներ ցեզերենի բարբառ են համարում: Գինուխներին հիշատակում են վրաց ժամանակագիրները:

Գունգիբներ (հունգիբներ, հունգեր) - Ինքնանունը՝ հունգալ: Ապրում են նաև Վրաստանում: Լեզուն՝ գունգիբերենը, շատ մոտ է բեժտերենին, որոշ գիտնականներ գունգիբերենը և բեժտերենը կապուչերենագունգիբերենի՝ *խվաներենի* բարբառներ են համարում: Գունգիբներին հիշատակում են վրաց ժամանակագիրները:

¹14-15-րդ դարերում գոյություն ուներ ֆեոդալական պետական կազմավորում՝ Անդիական շամխալություն: Անդիների արտադրած այծենակաճերը հանրահայտ էին Կովկասում:

² *Քազուլալ* անվան տակ ավարները շատ հաճախ միավորում են նաև թինդալերին (տինդալերին): Գուցե պատճառն այն է, որ ծագումնաբանորեն բազուլալերենն ու թինդալերենն այնքան ազգակից են, որ կարելի է համարել 1 լեզվի 2 բարբառ:

³ *Գոդոբերի* էթնանունը ստուգաբանվում է *ազրավի աչք* արտահայտությամբ: Ավանդության համաձայն՝ Գոդոբերի գյուղը հիմնել են 2 որսորդ, որ առանց վրիպելու նույնիսկ ազրավի աչքին կարող էին խփել:

⁴ Աշխարհագրոյցում՝ *Դիդոլլը*: 15-րդ դարից այս անունը կիրառվում է զուտ էթնիկ, ոչ թե քաղաքական իմաստով: Այբբենական կարգը խախտում ենք՝ նպատակահարմար գտնելով առաջինը ներկայացնել այն ժողովրդին, որի անունով կոչվում է ԷԼԵԾԸ-ը:

Խվարչներ - Ինքնանունը՝ ատլիլյկո: Էթնիկ տարածքում ունեն 7 գյուղեր, թեև մեծ մասն այսօր ապրում է Խասավյուրտի և Կիզիլյուրտի շրջաններում: Լեզուն՝ խվարչերեն: Ունի 2 բարբառ, որոնք այնքան են իրարից տարբերվում, որ որոշ մասնագետներ համարում են առանձին լեզուներ՝ խվարչերեն և ինխոքվարերեն:

Լաքյան ԷԼՃ

Լաքեր¹ - Ինքնանունը՝ լաք: Էթնիկ տարածքը լեռնային Ղաղստանի կենտրոնական հատվածն է, սակայն մեծ թվով լաքեր այսօր ապրում են հարթավայրային Ղաղստանում՝ Նովոլաքսկի շրջանում, որը ձևավորվեց, երբ արքայական չեչենների տարածքում ստիպողաբար վերաբնակեցրին լաքերին: Լեզուն՝ լաքերենը, մեկուսի դիրք է զբաղեցնում Ղաղստանյան լեզուների մեջ², ունի բազմաթիվ բարբառներ: Գրական լեզվի հիմքում ընկած է Կումուլի բարբառը: Սունի մահմեդական են: Լաքերի օրինակով գիտնականները փորձում են փաստել, որ Ղաղստանյան որ ժողովուրդն ամենաաշուտն է ընդունել մահմեդականություն, այսօր ամենաաշխարհիկն է:

Ղարզինալեզգիական ԷԼՃ

Ղարզինական ԷԼԵՃ

Ղարզիններ - Ինքնանունը՝ դարզան: Ղարզինների էթնիկ տարածքը լեռնային Ղաղստանի միջին հատվածներն են, լաքերից հյուսիս-արևելք, սակայն այսօր նրանց մեծագույն մասն ապրում է հարթավայրային Ղաղստանում: Լեզուն՝ դարզիներեն, որն ունի մի քանի բարբառ: Գրական լեզվի հիմքում ընկած է Աքուշայի բարբառը: Բարբառների փոխըմբռնման բարդություններով պայմանավորված՝ դարզինների տարբեր հատվածներ իրար հետ չուսերենով են շփվում: Սունի մահմեդական են:

Կուբաչիներ³ - Ինքնանունը՝ ուղբուղ: 6-րդ դարից հիշատակվում են որպես *գիրիխգերաններ* (պարսկերեն՝ օղազրահ, վերտազրահ պատրաստողներ), 15-րդ դարից՝ կուբաչիներ (թուրքերեն՝ օղազրահ, վերտազրահ պատրաստողներ): Մեծագույն մասն ապրում է Ղաղստանի Կուբաչի ավանում⁴: Լեզուն կուբաչիերեն (արբուկերեն): Սունի մահմեդական են:

Կայտագներ⁵ - Ինքնանունը՝ խայդագ: 1-ին անգամ հիշատակվում են 9-րդ դարի արաբական աղբյուրներում: Ապրում են կուբաչիներից հարավ և արևելք: Լեզուն՝ կայտագերեն: Սունի մահմեդական են:

Լեզգիական ԷԼԵՃ

Արևելալեզգիական ԷԼԵՃ

Լեզգիներ⁷ - Ինքնանունը՝ լեզգի: Լեզգիները Հարավային Ղաղստանի հնագույն բնիկներն են²: Ապրում են նաև Ադրբեջանում, քանի որ լեզգիների էթնիկ տարածքը՝

¹ Աշխարհացոյցում հիշատակված *Ղեկք* ժողովրդին որոշ մասնագետներ կապում են լաքերի, ոմանք՝ լեզգիների հետ: Լաքերն անցյալում հայտնի էին *կազիկումուլյսցիներ* (ղազիղումուլյսցիներ) անունով՝ Կազիկումուլի ֆեոդալական պետական կազմավորման, հետագայում խանության կենտրոն Կազի-Կումուլի անունով: Կա տեսակետ լաքերի ոչ Ղաղստանյան ծագման մասին: Մշակույթի որոշ բնագավառներում կան յուրահատկություններ, որոնք Կովկասի մյուս ժողովուրդների մեջ չկան: Լաքերի յուրաքանչյուր գյուղ մասնագիտացած է արհեստի մի բնագավառում: Հանրահայտ է Բալբար (Բալխար) գյուղը, որտեղ բրուտագործությամբ ավանդաբար զբաղվել են կանայք: Այսօր լաքերը համարվում են Ղաղստանի ամենամտավորական ժողովուրդներից մեկը: Կովկասցի 1-ին տիեզերագնացը՝ Մուսա Մանարովը լաք է:

² Կա կարծիք, որ միջանկյալ է ավարա-անդո-ցեզական և դարզինալեզգիական լեզուների միջև: Որոշ լեզվաբանների կարծիքով այն ավելի ազգակից է ավարա-անդո-ցեզական, մյուսների կարծիքով՝ դարզինալեզգիական լեզուներին:

³ Ե. Մ. Շիլինգը և այլ գիտնականներ վերագրում են եվրոպական ծագում:

⁴ 5-10-րդ դարերում Ջիրիխգերանի Կուբաչի (Արբուկանտի) գյուղը Ղաղստանի առաջին վաղ-պետական կազմավորումներից մեկի կենտրոնն էր: 1960-ական թ. բանվորական ավան Կուբաչին դարձավ ժողովրդական գեղարվեստական ստեղծագործության խոշոր կենտրոն: Արհեստի որոշ ճյուղեր, հատկապես մետաղամշակությունը՝ ոսկերչությունը, արծաթագործությունը, բարձրացել են արվեստի մակարդակի: Կուբաչիական դաշույնն ամենահարգի իրն էր, որով Կովկասում փոխհատուցում էին *արյան գինը*: Կուբաչիների ժողովրդական ստեղծագործությանը նվիրված ցուցահանդեսներ են կազմակերպվել աշխարհի տարբեր երկրներում, մի քանի անգամ՝ Լուվրի թանգարանում:

⁵ Որոշ գիտնականներ կայտագների և կուբաչիներին համարում են ԵԷՀ-ներ դարզինների մեջ, իսկ կայտագերենը և կուբաչիերենը՝ դարզիներենի բարբառներ: 14-19-րդ դարերում կար քաղաքական կազմավորում՝ Կայտագյան ուժմիություն: Կայտագների ձևավորմանը մասնակցել է մոնղոլական տարրը, որն այսօր չի նշմարվում նրանց մարդաբանական հատկանիշներում: 17-րդ դարի ճանապարհորդ Էվլիա Չելեբին կայտագներին բնութագրել է որպես մոնղոլներ և գրառել է մի քանի տասնյակ զուտ մոնղոլական բառեր կայտագերենից:

պատմական Լեզգիստանը, Սամուր գետով բաժանված է 2 պետությունների մեջ³: Լեզուն՝ Լեզգիերեն, որն ունի բարբառային 3 խմբեր: Կյուրինյան բարբառախմբի գյունեյան բարբառը (խոսվածքը) ընկած է գրական Լեզվի հիմքում: Մեծագույն մասը սունի մահմեդականներ են, Դաղստանի Լեզգիների մեջ կան նաև շիա մահմեդականներ:

Թաբասարաններ- Ինքնանունը՝ թաբասարան (թավասարան): Թաբասարանները Հարավ-արևելյան Դաղստանի հնագույն բնիկներն են⁴: Լեզուն՝ թաբասարաներեն՝ հյուսիսային և հարավային բարբառներով: Գրական Լեզվի հիմքում ընկած է հարավային բարբառը: Սունի մահմեդական են:

Արևմտալեզգիական ԷԼԵԾ

Ռուտուլներ (ռութուլներ) - Ինքնանունը՝ մըհադ: Մեծագույն մասն ապրում է Հարավային Դաղստանում⁵, ապրում են նաև Ադրբեջանում, հիմնականում Շաքիի շրջանում: Լեզուն՝ ռուտուլերեն՝ 4 հիմնական բարբառներով: Սունի մահմեդական են:

Ազուլներ (ադուլներ)⁶- Ինքնանունը՝ ադուլ, ավելի հաճախ իրենց կոչում են գյուղերի անուններով: Հարավ-արևելյան Դաղստանի կենտրոնական մասի բնիկներն են, ռուտուլներից հյուսիս-արևելք: Ապրում են 4 կիրճերում⁷ (ամենաշատ գյուղերը Ազուլդերեում են, դերե՝ կիրճ): Լեզուն՝ ազուլերեն՝ 4 խոսվածքներով (բարբառներով): Սունի մահմեդական են:

Ցախուրներ (ծախուրներ)⁸ - Ինքնանունը՝ յըքը: Ապրում են Դաղստանում, ռուտուլներից հարավ-արևմուտք, դժվարամատչելի բարձրադիր տարածքներում⁹: Ադրբեջանի Ջակաթալայի, Բելոկանիի (Բալաքենի), Կախի շրջանների նախալեռնային

¹ Թեև գրավոր աղբյուրներում այս էթնանունը հիշատակվում է վաղուց, սակայն լայն շրջանառության մեջ է մտել 19-րդ դարի վերջերից 20-րդ դարի սկզբից: Մինչ այդ շրջանառվում էր *կյուրինցի (ախտի-կյուրինցի)* էթնանունը: 19-րդ դարում Կյուրինյան խանություն կար, որի կենտրոնը Լեզգիական Կուրախ գյուղն էր:

² Լեզգիներին հաճախ համարում են անտիկ հեղինակների հիշատակած Արևելյան Կովկասում ապրող *լեզեր ժողովրդի* հետնորդներ: *Տե՛ս* նաև հղում 31: 9-10-րդ դարերի արաբական աղբյուրներում հիշատակություն կա *Լակզ* վաղ-ֆեոդալական պետական կազմավորման մասին Արևելյան Կովկասում: Լեզգիների Հնդկաստանից գալու մասին տեսակետը, որը հատկապես հենվում է բուրիշկների հետ նրանց մարդաբանական ինչ-ինչ նմանությունների վրա, գիտական լուրջ հիմնավորման կարիք ունի: Շրջանառվել է կարծիք նաև Լեզգիների և բասկերի մարդաբանական նմանությունների մասին: Լեզգիներին ավանդաբար բնութագրական է եղել գորգագործական զարգացած մշակույթը: Հոգևոր գանձարանից հատկապես հայտնի է *Շարվիլի* էպոսը:

³ Նվիրական նպատակ ունեն միավորելու 2 պետությունների մեջ բաժանված էթնիկ տարածքը: 90-ական թվականներից Դաղստանում գործում է *Սադվալ* (Միասնություն) կազմակերպությունը (հրատարակվել են *Լեզգիստան* պարբերականի մի քանի համարներ), Ադրբեջանում՝ *Սամուր* Լեզգիական ազգային կենտրոնը (հրատարակվում է *Սամուր* թերթը):

⁴ Հայկական աղբյուրներում (Աշխարհացոյց, Եղիշե) հիշատակվում են *Թաասպարք*, արաբական որոշ աղբյուրներում՝ *թաբարներ*: Շրջանառվել են տեսակետներ թաբասարանների մոնղոլական, հայկական, իրեական, պարսկական ծագման մասին, բայց գիտականորեն դրանք հիմնավորված չեն: 19-րդ դարում թաբասարանների տարածքում ֆեոդալական երկու կազմավորումներ կային՝ հյուսիսում՝ կադիի, հարավում՝ մայսումի գլխավորությամբ: Էթնիկ տարածքը ժողովրդի մեջ հայտնի է *Թաբարստան* (բարձրադիր երկիր) անունով: Թաբասարանների մշակույթն այսօր կրում է Լեզգիական և Ադրբեջանական ազդեցություն: Թաբասարանական գորգերը ցուցադրվել են եվրոպական թանգարաններում: Հայտնի թուրք գիտնական, Գերմանիայի էկոլոգիայի նախարարի խորհրդական Օքթայ Թաբասարանի ազգանունը վկայում է, որ դաղստանցի մոհաջիրների հետնորդ է:

⁵ Ամենամեծը Ռուտուլ գյուղն է: Հայկական աղբյուրներում հիշատակված հնովցիներն են (Աշխարհացոյցում *Խենալք*): Հնով գյուղը Դաղստանի Ախտիի շրջանում է: Աղվանքի *Գելերի երկիր* կոչված տարածքի բնիկների հետնորդներն են: 16-րդ դարից հայտնի էր Ռուտուլական մահալը, որը ռուտուլ բեկի կողմից կառավարվող գյուղական համայնքների քաղաքական միություն էր:

⁶ Ամենավաղ տեղեկությունները Աշխարհացոյցում են *Ադուտականք*, ապա 8-9-րդ դարերի արաբական աղբյուրներում: Ավանդաբար մշակութային կապեր են ունեցել Լեզգիների հետ ի տարբերություն ռուտուլների և ցախուրների, որոնք սերտ կապեր են ունեցել Ադրբեջանցիների, ոչ թե Լեզգիների հետ: Ի տարբերություն Կովկասի մյուս ժողովուրդների *կենաց ասելու* մշակույթն աղուլներին բնորոշ չի եղել, մեծ ընտանիքի քայքայման դեպքում թեկուզ ամուսնացած քույրերը հողի և այլ ունեցվածքի բաժին էին ստանում:

⁷ Մինչև 1930-ական թ. ավտոձանապարհի կառուցումը կտրված էր արտաքին աշխարհից:

⁸ Աշխարհացոյցում հիշատակվում են *Ցըխուրք*: Աղվանքի վերացումից հետո ցախուրների էթնիկ տարածքում ձևավորվեց քաղաքական կազմավորում՝ Ցախուր (Ցուկետիա, Աշխարհացոյցում *Շուքեթ*) կենտրոնով, որի գլուխ 15-րդ դարից կանգնեց ցախուրական սուլթանը: 18-րդ դարում նրա նստավայրը Ցախուր գյուղից տեղափոխվեց Ադրբեջանի Իլիսու գյուղ: Ադրբեջանի ցախուրների մի մասն ավարների հետ միասին մտնում էին Ջարո-Բելոկանիի ազատ համայնքների միության մեջ: Ցախուր կլայեկիչ տղամարդիկ իրենց որակյալ աշխատանքով ավանդաբար ապրուստի միջոց են վաստակել գրեթե ողջ Կովկասում, նաև Հայաստանում: Հատկապես Ադրբեջանի ցախուրները կրում են Ադրբեջանական լեզվամշակութային մեծ ազդեցություն:

⁹ Հարևան ժողովուրդների հետ դժվարանցանելի լեռնանցքներով շփումն ավանդաբար հնարավոր է եղել իրականացնել միայն ամռանը:

և հարթավայրային գյուղերում ապրող ցախուրների թիվը գերազանցում է Ղաղստանում ապրողների թվին: Լեզուն՝ ցախուրերեն՝ 2 բարբառներով: Սունի մահմեդական են¹:

Հարավ-լեզգիական կամ շահդադյան ԷԼԵՆԸ

(Շահդադյան փոքրաքանակ ժողովուրդների էթնիկ տարածքը Շահդադ լեռան շրջակայքի բարձրադիր և դժվարամատչելի գյուղերն են)

Բուդուղներ - Ինքնանունը՝ բուդադ: Մեծագույն մասն ապրում է Ադրբեջանում, մի քանի գյուղերում, որոնցից մեկը՝ Բուդուղ: Լեզուն՝ բուդուղերեն: Սունի մահմեդական են:

Կրիզներ - Ինքնանունը՝ քրրոծ: Մեծագույն մասն ապրում է Ադրբեջանում, Քրրոզ, Ջեք, Խափութ, Ալրք և մի քանի այլ գյուղերում: Լեզուն՝ կրիզերեն: Կա կարծիք, որ ջեքերը, խափութիները և ալրքները առանձին ժողովուրդներ են, ոչ թե կրիզների ԵԷՀ-ներ: Սունի մահմեդական են:

Խինալղներ (խինալրզներ) ² - Ինքնանունը՝ քեթիթուրդուր, քեթ խալխ (ստուգաբանվում է՝ համագյուղացիներ): Աղվանքի ժողովուրդների հետնորդներից են, ապրում են Ադրբեջանում, մեծագույն մասը՝ Ղուբայի շրջանի Խինալրղ (Քեթ) գյուղում: Լեզուն՝ խինալրղերեն՝ ադրբեջաներեն, պարսկերեն, արաբերեն բավականին փոխառություններով: Սունի մահմեդական են:

Ուղիական ԷԼԵՆԸ

Ուղիներ- Ինքնանունը՝ ուղի, ուտի: Պատմական Աղվանքի հնագույն բնիկներից են³: Ուղիների էթնիկ տարածքը ժամանակակից Ադրբեջանի հյուսիս-արևելյան շրջաններն են: Ադրբեջանում այսօր ուղիներն ապրում են Կուտկաշենի (1991 թվականից՝ Կաբալա/Գաբալա) շրջանի Նիժ գյուղում (ադրբեջանական մշակութային մեծ ազդեցությամբ), Վարդաշեն (1991 թվականից՝ Օղուզ) շրջկենտրոնում (վրաց մշակութային որոշ ազդեցությամբ): Արևելյան Վրաստանում ուղիներն ապրում են Ջինոբիանի (Օկտոմբերի) գյուղում (Կախեթիա), ուր գնացել են 1920-ական թվականներին Ադրբեջանի Վարդաշեն շրջկենտրոնումից : Լեզուն՝ ուղիերեն, որն ունի 2 բարբառ՝ Վարդաշենի և Նիժի: Վրաստանի ուղիները ուղղափառ են և ուղիախոս, առավել ցայտուն էթնիկ ինքնագիտակցությամբ: Մինչև 1988 թ. Ադրբեջանի ուղիները հիմնականում հայախոս են եղել (օգտվելով նաև գրական ադրբեջաներենից), ինչպես նաև՝ հայ-առաքելական⁴:

Արչիական ԷԼԵՆԸ

Արչիներ⁵ - Ինքնանունը՝ արչիշտիբ (ստուգաբանվում է բնակավայրերի ընդհանուր՝ Արշա անունով): Հայտնի են լաքերի տված էքզոթեթնանունով: Ապրում են Ղաղստանում, լաքերի և ավարների միջև: Լեզուն՝ արչիերեն⁶, բարբառներ, խոսվածքներ չկան: Սունի մահմեդական են:

ՔԱՐԹՎԵԼՅԱՆ ԷԼԸ

Վրացիներ - Ինքնանունը՝ քարթվելի (ստուգաբանվում է լեզենդար նախնի Քարթ-լոսի անունով)⁷: Մեծագույն մասն ապրում է Վրաստանում: Վրաց էթնոսը բաղկացած է

¹ 11-13-րդ դարերում Ցախուր գյուղում կար մեդրեսե, որտեղ դասավանդումն արաբերենով էր:

² Նկատի ունենալով լեզվի յուրահատկությունները՝ որոշ մասնագետներ խինալրղներին համարում են ոչ թե լեզգիական ժողովուրդներին ազգակից, այլ առանձին ԷԼԵՆ կամ *մեկուսի* Վայնախա-ղաղստանյան (Արևելակովկասյան) ժողովուրդների մեջ: Մեծապես կրում են ադրբեջանական մշակութային ազդեցություն:

³ Արևմտալեզգիական, հարավ-լեզգիական 6 ժողովուրդները և ուղիները միասին հայտնի են որպես *Սամուրյան ժողովուրդներ* Սամուր գետի անունով: Ուղիներին հիշատակում է Հովհաննես Ղրախանյանը: Ըստ պատմաբան Բ. Հարությունյանի՝ Հերոդոտոսի, Ստրաբոնի հիշատակած *ուտիները*, *ուխիները* կապ չունեն ուղիների հետ:

⁴ Ուսաստանում և որոշ պետություններում (նաև՝ Հայաստանի Հանրապետության տարածքում) ուղիները հայտնվել են հիմնականում Սունգայիթյան ջարդերից հետո, քանզի հայադավան ուղիները ևս գերծ չմնացին հալածանքներից և բռնազաղթեցին: Ուղիների մասին *Տե'ս* Грануш Харатян, *Официальные этно-демографические показатели в Азербайджане в контексте поиска и кризиса идентичности азербайджанцев*. Удины: крах всех усилий самосохранения, М., 2015.

⁵ Սկսած 1939 թ. մարդահամարից՝ գրանցվել են ավարներ: 19-րդ դարում Կազիկունուլի խանության կազմում էր Արչի (Արչիբ) գյուղական համայնքը: Լեզվով մոտ են լեզգիներին, էթնիկ ինքնագիտակցությամբ՝ ավարներին, մշակույթով՝ ավարներին, լաքերին:

⁶ Որոշ գիտնականներ արչիների լեզուն ծագումնաբանորեն ազգակից են համարում ավարա-անդո-ցեզական լեզուներին: Օգտվում են գրական ավարերենից և (կամ) լաքերենից:

⁷ Ուսական աղբյուրներում հայտնի են *իվերներ* (իբերներ) էթնանունով: Կա կարծիք, որ *the Georgians* էքզոթեթնական հիմքում ընկած է վրացիների սիրելի սուրբ Գևորգի անունը:

ավանդույթներով, հոգեկերտվածքով տարբերվող 2 տասնյակից ավելի ազգագրական խմբերից¹ քարթլիներ, կախեթցիներ, ինգիլոյներ (ապրում են Ադրբեջանում), ֆերեյդաններ (ապրում են Իրանում, Սպահանի մոտ, 17-րդ դարում Արևելյան Կրաստանից Շահ Աբասի կողմից բռնագաղթեցրած բնակչության հիմնականում կախեթցիների հետնորդներն են): Արևելյան Կրաստանի լեռնեցիներն են մթուկները (մթա՝ լեռ), գուդամակարները, մոխևները (խևի՝ կիրճ), փշավները, խևուրները², թուշերը: Արևմտյան Կրաստանի ազգագրական խմբերն են սվաններ, մեգրելներ, լազեր³ և արևելավրացական ծագում ունեցող իմերներ (վերին և ներքին), լեչխումներ, ռաճաներ, գուրիներ⁴, աջարներ⁵: Թուրքիայում ապրում են իմերխևները և չվենեբուրիները⁶: Հարավային Կրաստանի ազգագրական խմբերն են ջավախները, մեսխերը⁷: Լեզուն՝ վրացերեն (քարթուլի էնա): Գրական վրացերենի հիմքում ընկած է քարթլիների (նաև՝ կախեթցիների, իմերների) բարբառը⁸: Վրացիների մեծագույն մասը ուղղափառ քրիստոնյա է: Քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն, ընդունել են 519 թ.: Իմերխևները, չվենեբուրիները, մեսխերի, ինգիլոյների, աջարների, լազերի մի մասը (հիմնականում Թուրքիայի լազերը) սունի մահմեդական են: Ֆերեյդանները շիա մահմեդական են:

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԷԼՆ⁹

Իրանական ԷԼՆ

*Օսեր*¹⁰ - Ինքնանունը՝ իրոն (փոքր հատվածի ինքնանունը՝ դիդոր (դիգոր), առաջին անգամ այս էթնանունը հիշատակվում է Աշխարհացույցում՝ *Աշտիգոր*

¹ *Ազգագրական խումբ* արտահայտությունը կիրառում ենք որպես հոմանիշ և՛ ԵԷՀ, և՛ տարածքային լեզվամշակութային հանրության (ՏԼՄՀ):

² Շրջանառվում են կարծիքներ, որ խևուրների ձևավորմանը մասնակցել են սկյուրները, նաև՝ խաչակիրները:

³ Լազերը հնագույն կոլխերի հետնորդներից են: Լազիկա (Էգրիսի) թագավորություն կար մ.թ. առաջին դարերում, որը 6-րդ դարում ընկավ Բյուզանդիայի տիրապետության տակ: Այսօր պատմական Լազիստանի մեծ մասը Թուրքիայի տարածքում է, և լազերի մեծագույն մասն ապրում է Թուրքիայում: Թուրքիայի լազերի մի մասը լազերեն չգիտի, անցել է թուրքերենի: Կրաստանի և Թուրքիայի պետական սահմանն անցնում է լազական հանրահայտ Սարփի գյուղի միջով:

⁴ Երեք դար շարունակ գտնվելով թուրքական տիրապետության տակ՝ մեծապես կրում են թուրքական մշակութային ազդեցություն: Երբեմն *the Georgians* էքզոէթնանունը ստուգաբանվում է ազգագրական այս խմբի անունով:

⁵ Որոշ գիտնականների կարծիքով գուրիների մահմեդականացած հատվածն են:

⁶ Բառացի՝ *մերոնքական*, Օսմանյան կայսրություն են գնացել 19-րդ դարի 2-րդ կեսին: Մեծ մասը դարձել է թուրքախոս:

⁷ Ակադեմիկոս Գ. Ս. Չիտայան վրացիների մեջ առանձնացնում էր 3 պատմաազգագրական հատվածներ՝ արևելյան՝ ամերներ՝ տարածքը՝ Ամերթթի (Սուրամից այս կողմ), ազգակից պատմական իբերներին, արևմտյան՝ իմերներ, տարածքը՝ Իմերթթի (Սուրամից այն կողմ), ազգակից կոլխերին, հարավային՝ մեսխեր, տարածքը՝ Մեսխեթի, ազգակից մոսխերին: Գտնվելով թուրքական տիրապետության տակ՝ մեսխերի մի մասը ոչ միայն մահմեդականացվեց, այլև դարձավ թուրքալեզու, իսկ ժամանակի ընթացքում կորցրեց վրացական էթնիկ ինքնագիտակցությունը, ձեռք բերեց նոր էթնիկ ինքնագիտակցություն՝ *թուրք մեսխեթցի (Մեսխեթի թուրք, Ախալցխայի թուրք)*: 1944 թ. ստալինյան բռնագաղթի պատճառով հայտնվեցին Ուզբեկստանում: Արդարացումից հետո նրանց էթնիկ տարածք վերադառնալը տարբեր պատճառներով անհնարին էր, մի մասը բնակություն հաստատեց Կրաստանի այլ տարածքներում, մի մասը՝ Ադրբեջանում: 1989 թ. Ֆերգանայի հայտնի դեպքերի պատճառով այս ժողովուրդը կրկին տեղահան եղավ, հիմնականում բնակություն հաստատեց Հյուսիսային Կովկասում՝ Կրասնոդարի երկրամասում, Կաբարդինա-Բալկարիայում և այլն: Վերջին մարդահամարների ժամանակ նրանք գրանցվում են պարզապես *թուրք*:

⁸ Որոշ մասնագետների կարծիքով Քարթվելյան ԷԼՆ-ն անցյալում ընդգրկում էր 4 էթնոս 2 ԷԼՆ-ով: Արևելաքարթվելյան ԷԼՆ-ը բաղկացած էր 1 էթնոսից՝ վրացիներ: Արևմտաքարթվելյան ԷԼՆ-ն ընդգրկում էր 3 էթնոսներ՝ սվաններ (մուշվեն, շոնի), մեգրելներ (մարգալի, մինգրել), լազեր (ճաներ): Թեև սվանները, մեգրելները և լազերն այսօր համարվում են ԵԷՀ-ներ կամ ազգագրական խմբեր վրաց էթնոսի համակարգում, այնուամենայնիվ, սվաներնը (բավականին տարբերվող 2 բարբառներով), մեգրելներնը (2 խոսվածքներով) և լազերները (3 խոսվածքներով) որոշ լեզվաբաններ համարում են ոչ թե վրացերենի բարբառներ, այլ դեռևս բանավոր պահպանված, ընտանեկան միջավայրում գործածվող, վրացերենին ծագումնաբանորեն բավականին ազգակից առանձին լեզուներ: Որոշ լեզվաբանների համոզմամբ լազերները և մեգրելները մեկ լեզվի՝ *զաներենի* բարբառներ են: Ի դեպ, լազերները և մեգրելները բառապաշարով, ձևաբանական և հնչյունաբանական տեսանկյունից իրար ավելի նման են, քան սվաներենի 2 բարբառները: Ըստ Ս. Ա. Հարությունովի՝ սվաներնը գրական վրացերենից տարբերվում է այնքանով, որքանով վրացերենը՝ ռուսերենից, մեգրելներնը այնքանով, որքանով չեխերենը՝ ռուսերենից, լազերները այնքանով, որքանով սլովակերենը՝ ռուսերենից: Վրացերեն նախալեզվից սկզբում անջատվել է սվաներենը, հետո քարթերենն ու զաներենը:

⁹ Ելնելով աշխատանքի հիմնական նպատակից (այն է՝ հայ ուսանողներին մայրենիով ծանոթացնել Կովկասի ժողովուրդների հետ)՝ հայերին չենք անդրադարձել:

¹⁰ Օսերի ձևավորմանը մասնակցել են *Կորանյան մշակույթ* կրող տեղաբնիկ կովկասյան և եվկոր իրանական տարրերը՝ սկյուրները, սարմատները և հատկապես ալանները, որոնք լեզվական առումով ծուլեցին բնիկների: Օսերի գերմանական ծագման մասին տեսակետը գիտական հավանության չի արժանացել: Փաստարկների թվում հիշատակվում էր նաև հյուսիսային օսերի կողմից էթնիկ ընկալվող ըմպելիքը՝ գարեջուրը, որն օսերեն հնչում է

(Աշդիգոր), Դիքոր): Աշխարհին հայտնի են վրացիների տված էքզոթեմանունով¹: Մեծագույն մասն ապրում է Հյուսիսային Օսեթիա-Ալանիա Հանրապետությունում և փաստացի անկախ Հարավային Օսեթիա Հանրապետությունում² (դե յուրե՝ Վրաստան): Լեզուն՝ օսերեն՝ *իրոն* և առավել արխաիկ *դիդոր* բարբառներով (դիդորներն ապրում են Հյուսիսային Օսեթիա-Ալանիայի արևմտյան հատվածում): Գրական օսերենի հիմքում իրոն բարբառն է, որն ունի մի քանի խոսվածք³: Մեծագույն մասն ուղղափառ քրիստոնյա է (քրիստոնեությունը տարածվել է դեռևս 6-րդ դարում Բյուզանդիայից, ապա՝ Վրաստանից, ավելի ուշ՝ Ռուսաստանից), դիդորները սունի մահմեդականներ են (մահմեդականություն ընդունել են 17-18-րդ դարերում կաբարդիներից), սակայն առավել կենսունակ են ավանդական հավատալիքները:

Թաթեր⁴ – Ինքնանունը՝ թաթ⁵: Կովկասում թաթերի մեծագույն մասն ապրում է Հյուսիս-արևելյան Ադրբեջանում⁶ : Լեզուն թաթերեն (Իրանական ԷԼՆ, Հարավ-արևմտյան ԷԼՆ), որը, ցավոք, նույնիսկ որպես ընտանեկան հաղորդակցության միջոց, քիչ է ծառայում⁷: Մեծագույն մասը շիա մահմեդական է, մի փոքր մասը՝ սունի մահմեդական:

Թալիշներ – Ինքնանունը՝ թոլըշ: Մեծագույն մասն ապրում է Հյուսիսային Իրանում և Հարավ-արևելյան Ադրբեջանում⁸: Լեզուն՝ թալիշերեն (Իրանական ԷԼՆ, Հյուսիս-արևմտյան ԷԼՆ): Գրական թալիշերենի հիմքում ընկած է Լենքորանի բարբառը: Մեծագույն մասը շիա մահմեդական է, կան նաև սունի մահմեդականներ:

ԱԼԹԱՅԱՆ ԷԼՆ

Թյուրքական ԷԼՆ

մոտավորապես նույն արտասանությամբ, ինչպես գերմաներեն: Օսերի համոզմամբ զարեջրի հայտնագործողը *Նարտական* (*Նարթական*) էպոսի գլխավոր հերոսուհի Սաթանան է: Ի դեպ, *Նարտական էպոսը*, որը հավասարապես Կովկասի մի շարք ժողովուրդների հոգևոր սեփականությունն է, այնուամենայնիվ, հատկապես օսական ինքնության համար ունեցել է նույն նշանակությունը, ինչ որ *Սասնա Շոտրը* հայերի համար:

¹ Վրացիները պաննեթիկ *օվսեր* (*օսեր*) էին անվանում, ռուսական աղբյուրներում հայտնի էին *յասեր*, *սոներ* անունով: Հունգարացիների մեջ այսօր էլ առանձնանում է Յաշազ նահանգում ապրող *յասեր* ազգագրական խումբը, որը հիշում է իր յասական, օսական, ալանական ծագման մասին:

² 2017 թ. ապրիլին Հարավային Օսեթիայում կայացած նախագահական ընտրությունների ժամանակ ընտրողները քվեարկեցին նաև Հարավային Օսեթիան *Ալանիայի Հանրապետություն* վերանվանելու օգտին: Օսերն իրենց էթնիկ տարածքից Հարավային Օսեթիա տեղափոխվել են մոտավորապես 12-րդ դարից (ի դեպ, մինչև 18-րդ դարը Ցխինվալի բնակչության մեծամասնությունը հայերն ու վրացական հրեաներն էին): Հարավային Օսեթիայի օսերը, այդ թվում նաև *կուդարցիները* (Աշխարհացույցում՝ *Քուբեթը*) կան *խուսայրագները* (բառացի՝ հարավային բնակիչներ) մեծապես կրում են վրաց մշակութային ազդեցություն: Օսերի մեջ առանձնանում են ևս մի քանի ազգագրական խմբեր՝ *ալագիրներ*, *կուրտատիներ*, *թազաուրներ* (որոշ մասնագետներ հայկական ծագում են վերագրում), *տուալներ* (Աշխարհացույցում՝ *Ղուալք*): Առանձին խումբ են կազմում Մոզդուկի օսերը, որոնց մշակույթն առավել, քան օսերի մյուս հատվածներինը, կրում է ռուսական ազդեցություն: Լեռնային Օսեթիայից այստեղ տեղափոխված օսերի վերաբնակեցման գործընթացը, որը կապված էր Մոզդուկ ամրոցի կառուցման հետ, սկսվել է 18-րդ դարի վերջից և շարունակվել է մինչև 20-րդ դար:

³ Ըստ Ս. Ա. Հարությունովի՝ հնդեվրոպական այս լեզուն (Իրանական ԷԼՆ, Հյուսիս-արևելյան ԷԼՆ) հնչյունաբանությամբ և քերականական նրբություններով հարմարեցված է կովկասյան լեզուներին: Թեև օսերենի շուրջ 20 տոկոս բառերն են իրանական ծագմամբ, սակայն դրանք հիմնական բառարմատներն են:

⁴ Հայտնի են նաև *կովկասյան պարսիկներ*, *անդրկովկասյան պարսիկներ* անունով: ԵՊՀ Իրանագիտության ամբիոնի նախաձեռնությամբ և ջանքերով 2014 թ. մայիսին Երևանում կայացավ Թաթագիտական 1-ին միջազգային գիտաժողովը:

⁵ Հատկանշական է, որ այս ինքնանունն առաջացել է էքզոթեմանունից: Սասանյան Պարսկաստանի տիրակալները գրաված տարածքներում որպես հենարան վերաբնակեցրին իրանական տարբեր էթնիկ տարրեր, որոնց հետագայում թյուրքալեզու եկվորները տվեցին հավաքական *թաթ* անունը (առհասարակ թյուրքալեզուները *թաթ* անվանում էին նստակյաց, երկրագործ ոչ թյուրքալեզու բնակչությանը):

⁶ Կարծիք կա, որ Իրանում ապրող թաթերը իրանական էթնիկ տարբեր հանրությունների խումբ են: Հայաստանում Նոր Մադրասա գյուղում, որը հիմնադրվել է Ադրբեջանից բռնագաղթածների կողմից, ապրում են թաթախոս հայեր: Թաթախոս հայերի ծագման և էթնիկ ինքնության մասին կան տարբեր տեսակետներ: *Տե՛ս* Հակոբյան Ա. Ա., Թաթախոս հայեր (պատմագագագրական ուսումնասիրություն), Առեմնախոսության սեղմագիր, Ե., 2002:

⁷ Ադրբեջանի՝ պղնձագործական մշակույթով հայտնի թաթական Լաիջ (Լագիչ, Լախիչ) գյուղի թաթերի թյուրքալեզու դառնալու գործընթացն արդեն ավարտվում է:

⁸ Տարածաշրջանի հնագույն բնիկներից են: 17-րդ դարից հայտնի էր Թալիշական խանությունը: Շրջանառվել է տեսակետ թալիշների մարական ծագման մասին: Ադրբեջանի թալիշները մեծապես կրում են ադրբեջանական լեզվամշակութային ազդեցությունը: 1993 թ. Ադրբեջանում թալիշները հռչակեցին Թալիշ-Մուղանական Ինքնավար Հանրապետությունը, որը գոյատևեց 2 ամիս: ԵՊՀ Իրանագիտության ամբիոնի՝ աշխարհում Թալիշագիտության միակ կենտրոնի նախաձեռնությամբ և ջանքերով Երևանում անցկացվել են Թալիշագիտական 1-ին և 2-րդ միջազգային գիտաժողովները:

Ղարաչայներ (կարաչայներ)¹ - Ինքնանունը՝ քարաչայը, թաուլու (բառացի՝ լեռնեցի): Մեծագույն մասն ապրում է Ղարաչայա-Չերքեզական Հանրապետության հարավային մասում: Լեզուն՝ ղարաչայաբալկարերեն: Սունի մահմեդական են (ընդունել են 18-րդ դարում, կաբարդիներից):

Բալկարներ² - Ինքնանունը՝ թաուլու, մալքարը: Մեծագույն մասն ապրում է Կաբարդինա-Բալկարական Հանրապետության հարավային մասում: Լեզուն՝ ղարաչա-բալկարերեն³: Սունի մահմեդական են: Մահմեդականությունը ընդունել են 17-րդ դարում, սակայն դեռևս 19-րդ դարում շարունակում էին կենսունակ մնալ քրիստոնեական և նախաքրիստոնեական հավատալիքները:

Կումիկներ – Ինքնանունը՝ քումուք (երբեմն ստուգաբանվում է գումուկ ավազի տեսակով, որով հարուստ է Կումիկյան հարթավայրը, նաև՝ կումանների՝ ղփչաղների անունով): Հարթավայրային և նախալեռնային Ղաղստանի բնիկներն են⁴: Լեզուն՝ կումիկերեն⁵, ունի երեք բարբառ: Գրական լեզվի հիմքում Խասավյուրտի բարբառն է: Սունի մահմեդական են:

Նողայներ⁶ - Ինքնանունը՝ նողայ (տուգաբանվում է Ոսկե Հորդայի տիրակալ Նողայի անունով⁷): Մեծագույն մասն ապրում է Ղաղստանի հյուսիսում, ինչպես նաև Ստավրոպոլի երկրամասում, Ղարաչայա-Չերքեզական Հանրապետությունում⁸: Ըստ այդմ՝ առանձնանում են հիմնական ազգագրական խմբերը՝ ղարանողայներ, Աչի-

¹ Չևավորվել են կովկասյան բնիկ տարրերի և եկվոր ղփչաղների հիմքի վրա: Որոշ մասնագետներ ղարաչայներին թյուրքացած օսեր են համարում, քանի որ նրանց ձևավորմանն ինչ-որ չափով մասնակցություն են ունեցել նաև պալանները: Մեզրելներն այսօր էլ ղարաչայներին պալան են ասում:

² Ռուսական աղբյուրներում հայտնի են *տավիհներ* կամ *լեռնային թաթարներ* անունով: Չևավորվել են կովկասյան բնիկ տարրերի և եկվոր ղփչաղների հիմքի վրա: Չևավորմանը մասնակցել է ղիզորների մի մասը, այդ պատճառով բալկարներին և թյուրքացած օսեր են համարում: Կա կարծիք, որ Կուբանի բուլղարները և մասնակցություն են ունեցել բալկարների ձևավորմանը, դրանից էլ բխում է *բալկար* էթնանունը: *Բալկար* էթնանունը ստուգաբանվում է նաև Մալք գետի անունով (կաբարդիներեն *Բալք*), որի մոտ ապրող տարածքային հանրությունը հայտնի է *մալքարներ* անունով: Տարածքային հանրությունների անունները հիմնականում համընկնում են կիրճերի անունների հետ:

³ Ղարաչայները և բալկարները խոսում են նույն լեզվով՝ ղարաչայաբալկարերեն, որը Թյուրքական ԷԼԽ-ի Հյուսիս-արևմտյան Ղփչաղական ԷԼԽ-ին է պատկանում: Հնարավոր է, որ եթե էլ բրուսի լեռնազանգվածը չլիներ, գուցե մեկ ժողովուրդ ձևավորվեր: Կարծիք կա, որ անցյալում մեկ ժողովուրդ է եղել, հետո բալկարներն առանձնացել են: Ղարաչայաբալկարերենն ունի երկու բարբառ՝ արևմտյան և արևելյան: Արևմտյան բարբառը, որով խոսում են ղարաչայները և բալկարների արևմտյան հատվածները, ընկած է գրական լեզվի հիմքում: Լեզուն բավականին փոխառություններ ունի աղբյուրներից և օսերներից, բնութագրվում է ղփչաղերենին հատուկ արխաիզմներով, որոնք ժամանակակից թյուրքական մյուս լեզուներում պահպանված չեն:

⁴ Հայկական ուշ միջնադարյան աղբյուրներում հիշատակվում են *ղումուխ* ձևով: Այսօր կումիկների էթնիկ տարածքում ժողովրդի միայն 20 տոկոսն է ապրում, այնուամենայնիվ, մեծագույն մասն ապրում է Ղաղստանում: Կումիկների էթնիկ տարածքում 17-րդ դարում ձևավորվել էր ֆեոդալական պետական կազմավորում՝ Տարկովյան շամհալությունը: Որոշ գիտնականներ գտնում են, որ ոչ թե կովկասյան տարրը թյուրքացել է, այլ կումիկները հայտնի էին այս տարածաշրջանում դեռևս մ.թ.ա.: Հաճախ նույնացնում են Պտղոմեոսի հիշատակած *կամեր*, *կամակներ* ժողովրդի հետ: Այն, որ կումիկների ձևավորման գործում որոշիչ են եղել բնիկ կովկասյան տարրերը, վկայում են և՛ մարդաբանական, և՛ մշակութային (նստակյաց են, երկրագործ, այգեգործ) տվյալները:

⁵ Կումիկները վաղուց գործածում էին *աջամ*, կումիկերենը ձևավորվել է մինչմոնղոլական շրջանում և Հյուսիսային Կովկասում միջէթնիկ հաղորդակցության, պաշտոնական գրագրության լեզուներից մեկն էր նողայերենի հետ միասին: 1920-ական թվականներին Ղաղստանում լույս տեսնող 20 տպագիր օրգաններից 15-ը կումիկերեն էր, քանզի անցյալում Ղաղստանի ամենամտավորական, կրթված ժողովուրդը կումիկներն էին: Ի դեպ, ղարաչայները և բալկարները բոլոր ղաղստանցիներին կումիկ էին ասում:

⁶ Նողայների ձևավորմանը մասնակցել են մոնղոլական և թյուրքական բազմաթիվ տարրեր (այդ թվում՝ ուլդուրներ), սակայն լեզվական առումով որոշիչ են եղել ղփչաղները: Անկասկած, այսօրվա նողայների ձևավորմանը մասնակցած երրորդ բաղադրիչը բնիկ կովկասյան տարրն է: Նողայների մշակույթն անշուշտ կովկասյան է՝ միջինասիական, հատկապես ղազախական երանգով: 1991 թ. նշվեց նողայների «եղիզե» էպոսի 600-ամյակը: Նողայների որոշ հատվածների մարդաբանական հատկանիշներում արտահայտված են մոնղոլիդ տարրերը, մեծ մասը բնութագրվում է մոնղոլիդ և եվրոպեոիդ հատկանիշների խառնուրդով:

⁷ Կա կարծիք, որ էթնանունն ավելի հին է, քան անձնանունը, բխում է հին թյուրքերի տոտեմի անունից:

⁸ Բնակության տարածքի նման պատկերը պայմանավորված է քոչվոր տնտեսածևով, որն անցյալում բնութագրական էր նողայներին: Կա կարծիք, որ նողայական քոչավայրերը Հյուսիսային Կովկասի տափաստանային գոտում հայտնվել են դեռևս 15-րդ դարի վերջին, սակայն Նողայական հարթավայրը նողայների հիմնական բնակատեղին դարձավ 17-րդ դարից՝ կապված կալմիկների ճնշմամբ դեպի հարավ նրանց ակտիվորեն քոչելու հետ: Նողայները հանդես են եկել Ռուսաստանի կազմում ինքնավար կազմավորում ունենալու պահանջով:

կուլակի նողայներ, ակնողայներ կամ Կուբանի նողայներ: Լեզուն՝ նողայերեն¹: Գրական լեզվի հիմքում ընկած է դարանողայների բարբառը: Սուևի մահմեդական են: Մահմեդականությունը նրանց մեջ տարածվել է 13-րդ դարի երկրորդ կեսից:

Ադրբեջանցիներ² – Ինքնանունը՝ ազրբայջանը: Մեծագույն մասն ապրում է Ադրբեջանում³: Լեզուն՝ ադրբեջաներեն⁴, բարբառային չորս խմբերով: Գրական լեզվի հիմքում ընկած են Բաքվի և Շամախու բարբառները: Մեծագույն մասը շիա մահմեդական է, կան նաև սուևի մահմեդականներ:

ԱՖՐԱՍԻԱԿԱՆ ԷԼԸ

Սեմական ԷԼԸ

Լեռնային հրեաներ⁵ – Ինքնանունը՝ ջուևուր: Կովկասում մեծագույն մասն ապրում է Ղաղստանում և Ադրբեջանում⁶: Լեզուն թաթերեն⁷ (հին եբրայերենի, կուևիկերենի, ադրբեջաներենի զգալի ազդեցությամբ)՝ հարավային և հյուևսային բարբառներով: Կրոնը՝ հուևաիզմ:

Վրացական հրեաներ⁸ – Ինքնանունը էբրաէլի (նաև՝ իսրաէլի, իսրաէլիշվիլի): Կովկասում մեծագույն մասն ապրում է Վրաստանում: Մայրենի լեզուն վրացերեն⁹: Կրոնը՝ հուևաիզմ:

Асмик Арутюнян, Этнолингвистическая и конфессиональная характеристика населения Кавказа (краткий очерк),-Кавказ исторически был не только перекрестком

¹ Նողայերենը մոտ է կարակալակերենին և դազախերենին, քիչ են կովկասյան փոխառությունները: Ինչպես նշեցինք, նողայերենը Հյուևսային Կովկասում եղել է միջէթնիկ հաղորդակցության լեզու, լայնորեն գործածվել է նաև պաշտոնական գրագրությունում:

² Էթնանունն առաջացել է տեղանունից՝ Ատրպատականի հնչունափոխված տարբերակից: Մինչև 1930-ական թվականները գործածական էր *անդրկովկասյան (կովկասյան) թյուրքեր, թաթարներ* անունը, իսկ տարածաշրջանն առավել հասուն էր *Շիրվան* անունով: Ադրբեջանական էթնոսի ձևավորման գործընթացը դեռևս շարունակվում է, ինչի մասին վկայում է տնտեսական զբաղմունքներով և զարգացածության աստիճանով տարբերվող Եւ-ների (այրումներ, դարափափախներ, փաղարներ և այլն) գոյությունը:

³ Իրանում՝ այսպես կոչված Պարսկական Ադրբեջանում, ապրողներին հաճախ չեն նույնացնում Ադրբեջանում ապրողների հետ: Ղաղստանում ապրողներն իրենց լիովին չեն նույնացնում Ադրբեջանի ադրբեջանցիների հետ, բաժանվում են 2 խմբի՝ Ղաղստանի թյուրքեր (զարգացած, քաղաքային բնակչություն՝ հիմնականում Ղերբենտում և շրջակա տարածքում ապրող) և թերթեմեներ (Ղերբենտից հյուևս գյուղական բնակչություն, որոնց Ղերբենտի թյուրքերն իրենց հավասար չեն դիտում):

⁴ Պատկանում է Թյուրքական ԷԼԸ-ի Հարավ-արևմտյան, Օղուզական ԷԼԸ-ին (տարածաշրջանի էթնոլեզվական գործընթացների վրա վճռորոշ ազդեցություն ունեցան թուրք սելջուկների՝ հատկապես օղուզների արշավանքները 11-14-րդ դարերում): Առավելագույն ազգակցություն ունի թուրքերենի և թուրքմեներենի հետ: Ադրբեջաներենի որոշ բարբառներում (հյուևսիսում, Ղաղստանում) նկատելի է դիչաղական, խազարական ազդեցություն: 1991թ. Ադրբեջանում որոշում է ընդունվել լեզուն անվանել *թյուրքերեն*:

⁵ Լեռնային հրեաների ձևավորման մասին շրջանառվում է հիմնականում 2 տեսակետ: Տեսակետներից մեկի համաձայն՝ այն թաթերի հետնորդներն են, որոնք խազարական թագավորության ժամանակ ընդունեցին հուևաիզմ: Ըստ մյուս տեսակետի՝ այն հրեաների հետնորդներն են, որ եկել են Միջագետք, Իրան, որտեղ յուրացրել են թաթերենը, ապա տարբեր պատճառներով (հիմնականում որպես հենարան Սասանյան Պարսկաստանի) տեղափոխվել են Հյուևսային Ադրբեջան, ապա Ղաղստան: Այս տեսակետի օգտին խոսում են հատկապես մարդաբանական տվյալները, որոնցով լեռնային հրեաները տարբերվում են թաթերից (որոշ մարդաբաններ (օրինակ՝ Ռ. Կասունովան), չեն կիսում այս տեսակետը): Եթե կրոնը (և կրոնով պայմանավորված մշակութային երևույթները) նկատի չառնենք, համարյա կովկասյան ժողովուրդ է՝ ավանդաբար դաշտավարական, այգեգործական զարգացած մշակույթով բնութագրվող: Թեև հակահրեական տրամադրությունները լեռնային հրեաներին չէին վերաբերում, նրանցից շատերը 1960-70-ական թվականներին գրվեցին *թաթ*: Այսօր ավելի հաճախ դիտվում են որպես հրեաների Եւ, էթնոլեզվական խումբ:

⁶ Վերջին տասնամյակներում մեծագույն մասը բնակություն է հաստատել Իսրայելում: Թեև Ղաղստանում և Ռուսաստանի այլ տարածքներում մեծամասամբ քաղաքաբնակ են (Ղերբենտում հստակ առանձնանում է լեռնային հրեաների թաղամասը), սակայն մինչև 19-րդ դարի կեսերը հիմնականում լեռնային տարածքներում էին ապրում, որտեղից էլ բխում է էթնոէթնանունը:

⁷ Հավանաբար մայրենի լեզուն վերջնականապես մոռացել են Ադրբեջանում և Ղաղստանում, որտեղ էլ 7-13-րդ դարերում ավարտվել է նրանց ձևավորումը՝ որպես ինքնուրույն էթնոս: Երբ խոսք է գնում թաթերեն թերթերի, գրականության, ռադիոժամի մասին, դա վերաբերում է հենց լեռնային հրեաներին:

⁸ Ղեռևս մ.թ.ա. 6-րդ դարում Վրաստան եկած հրեաների հետնորդներն են, որոնք, դարեր շարունակ ապրելով Վրաստանում, թեև պահպանել են կրոնը, սակայն վրացական լեզվամշակութային ազդեցությանն են ենթարկվել, նոր էթնանուն են ստացել՝ *վրացական հրեաներ*, ոչ թե *վրացացած*: Վրացական աղբյուրներում հայտնի են 11-րդ դարից: 20-րդ դարի սկզբին Ցխինվալում ապրող վրացական հրեաները թվաքանակով գերազանցում էին օսերին: Հատկապես անցյալում գերադասում էին գրվել առանձին էթնոս: Վերջին տասնամյակներում մեծագույն մասը բնակություն է հաստատել Իսրայելում: Այսօր ընդունված է նրանց համարել հրեաների էթնոլեզվական խումբ:

⁹ Առևտրականների շրջանում ձևավորվել էր *կիվրուլի* ժարոնը, որը եբրայերենի և վրացերենի խառնուրդ է:

между Европой и Азией, но и является самостоятельным древнейшим очагом цивилизации и уникальной историко-этнографической областью. Именно поэтому важно знать народы, составляющие кавказский культурный мир. В данной работе сделана попытка представить население Кавказа с точки зрения его этнолингвистической и конфессиональной классификации, популяризировать народы Кавказа среди армянских студентов. Рассмотрены около 50 этнических общностей, указаны основные регионы их проживания, родные языки и религии, которые исповедуют эти народы.

Hasmik Harutyunyan, The ethno-linguistic and religious characteristics of the Caucasus population (short essay), - The Caucasus historically has been not only a cross-road between Europe and Asia, but also a separate ancient hearth of civilization, a unique historical-ethnographical region. Hence, it is very important to be acquainted with the ethnic groups, presenting Caucasian cultural world. The main aim of this paper is to introduce students to the ethnic groups of the Caucasus. The people of the Caucasus are classified on the base of their ethno-linguistic and religious belonging. About 50 ethnic groups are examined in this paper. Regions, where they live, their mother tongues and religions are also indicated.